Հավելված
ՀՀ վարչապետի 2019 թ.
փետրվարի 12 -ի N 117 - Լ
որոշման

«Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
մայիսի 25-ի N 565-Լ
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՄԱԿԱՐԳՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Ավինյանը համաձայնեցնում, ներդաշնակեցնում և համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունն իրեն վերապահված հետևյալ առանձին ոլորտներում՝

1) տարածքային կառավարում, էներգետիկ ենթակառուցվածքներ, տրանսպորտ, ճանապարհներ, բնական պաշարներ, ջրային ոլորտ, աղբահանություն, պետական գույքի կառավարում.

2) բնապահպանություն.

3) տնտեսական զարգացում և գյուղատնտեսություն.

4) կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ.

5) միջուկային անվտանգություն.

6) վիճակագրություն.

7) քաղաքաշինություն.

8) անշարժ գույքի կադաստր.

9) բարեգործություն, այդ թվում՝ բարեգործական ծրագրեր.

10) Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների և դրանցում քննարկվող փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքներ:

2. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը համաձայնեցնում, ներդաշնակեցնում և համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունն իրեն վերապահված հետևյալ առանձին ոլորտներում՝

1) ֆինանսական և բյուջետային քաղաքականության հարցեր, այդ թվում՝ ոլորտային ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման մասով.

2) հարկային բարեփոխումներ.

3) արտաքին տնտեսական կապեր, միջազգային առևտրի հարցեր, միջկառավարական հանձնաժողովների աշխատանքներ.

4) միջազգային ֆինանսավարկային կառույցների, այդ թվում՝ Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի հետ աշխատանքներ.

5) միջազգային տարածաշրջանային կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական միության, ԱՄՆ զարգացման գործակալության, Անկախ պետությունների հետ համագործակցության շրջանակներում իրականացվող աշխատանքներ և ծրագրեր.

6) ռազմավարությունների քաղաքականությունների մշակում, բարեփոխումներ, այդ թվում՝ պետական կառավարման համակարգի.

7) օրենսդրության գնահատման և կարգավորման քաղաքականություն, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հետ աշխատանքներ.

8) հակակոռուպցիոն քաղաքականություն.

9) հանրային ծառայություն:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ